ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» սեպտեմբերի 2019 թվականի N464-Ա/ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՂՄԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N230-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի

ղեկավարի 2019 թվականի հուլիսի 29-ի N211 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի հունիսի 21-ի նիստի թիվ 10 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի հունիսի 30-ի նիստի թիվ 6 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արմեն Դավթյանի, Խաչատուր Խնձրցյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Աշոտ Կյուրեղյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Անահիտ Մինասյանի, Նորայր Արշակյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Արմենուհի Երանոսյանի, Լիա Խաչատրյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գառնիկ Սիմոնյանին, Կարինե Սերոբյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Շուշան Վարդանյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Անահիտ Մինասյանին, Վալյա Կյուրեղյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սաթենիկ Տեփոյանին, Թամարա Ուրուշանյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հողմիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի

անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N230-Ա որոշման հավելվածում «Դավթյան Արմեն», «Խնձրցյան Խաչատուր», «Կյուրեղյան Աշոտ», «Արշակյան Նորայր», «Երանոսյան Արմենուհի», «Խաչատրյան Լիա» բառերը համապատասխանաբար փոխարինել «Սիմոնյան Գառնիկ», «Սերոբյան Կարինե», «Վարդանյան Շուշան», «Կյուրեղյան Վալյա», «Տեփոյան Սաթենիկ», «Ուրուշանյան Թամարա» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի համար՝ճիշտ է